Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018թ.
սեպտեմբերի 19-ի N1230-Ն
որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ պետական եկամուտների կոմիտե**
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ **535-Ա**
3. Անունը, ազգանունը,զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը՝ **Վրաստան՝ քաղաք Թբիլիսի**
5. Գործուղման ժամկետները՝ **23.06.2025-23.06.2025թթ.**
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ **ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցների հաշվին**

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☑ ա.փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Էդուարդ Հակոբյան*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	92,715.00	**92.72**
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	-	
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)	-	-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	USD 74.00	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	28,535.88	
	Օրերի քանակը	1	
	Ընդամենը (դրամ)	28,535.00	**28.54**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		-
	Մուտքի արտոնագրի վճար		-
	Այլ ծախսեր (*նկարագրել*)		-
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		**121.25**	**121.25**

Գլխավոր ֆինանսիստ _____ ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ 25.06.2025թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի հունիսի 23-ին ք. Թբիլիսի (Վրաստան) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Էդուարդ Հակոբյան՝ ՀՀ ՊԵԿ նախագահ

Ծանոթություն՝ Պատվիրակության կազմում էին նաև ՀՀ էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանը և ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արման Խոջոյանը:

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Վրաստան, ք. Թբիլիսի, 2025թ. հունիսի 23:

3. Հրավիրող կողմը՝

Այցելությունը կազմակերպվել է ՀՀ-ի նախաձեռնությամբ:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր Վրաստանի պատկան մարմինների հետ քննարկելու Գեզիի մաքսային տերմինալում օրեր շարունակ կանգնած շշալցված կոնյակ փոխադրող բեռնատարների կարգավիճակը, ինչպես նաև ՀՀ-ից արտահանվող շշալցված կոնյակի հետ կապված խնդիրները:

5. Քննարկված թեմաները՝

Վրացական կողմից հանդիպմանը մասնակցել են Վրաստանի փոխվարչապետ Լևան Դավիթաշվիլին, Շրջակա միջավայրի պաշտպանության և գյուղատնտեսության նախարար Դավիթ Սոնգուլաշվիլին, Էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարի տեղակալ Գենադի Առվելադզեն և Եկամուտների ծառայության ղեկավար Իրակլի Բերայան: Այցի ընթացքում քննարկվել են Վրաստանի կողմից հայկական կոնյակների մասով նշանակվող փորձաքննությունները, և դրա արդյունքում Գեզիի մաքսային տերմինալում օրեր շարունակ կանգնած շշալցված կոնյակ փոխադրող

բեռնատարների կարգավիճակի հետ կապված հարցեր, ինչպես նաև ՀՀ-ից արտահանվող շշալցված կոնյակի հետ կապված այլ խնդիրներ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպման ընթացքում ՀՀ պատվիրակությունը ներկայացրել է, որ խնդրահարույց է տասնյակ օրեր շարունակ հայկական կոնյակով բեռնված բեռնատարների պահելը Վրաստանի մաքսային տերմինալում, ինչը հանգեցնում է ՀՀ արտադրողների համար էական ծախսերի, պայմանագրային պարտավորությունների խախտման և այլն:

Վրաստանի կողմից նշանակվող փորձաքննությունների գծով ՀՀ պատվիրակության կողմից կարևորվել է, որ ՀՀ-ի համար նույնպես էական է կոնյակի որակը և ներկայացվեց, որ հավանաբար 2025թ. հոկտեմբեր ամսից ՀՀ-ն նույնպես կունենա կոնյակի որակի հսկման լաբորատորիա և նույնիսկ առաջարկվել է, որ ցանկության դեպքում Վրաստանի համապատասխան մարմինները նույնպես կարող են գալ և տեսնել որակի հսկման գործընթացը:

ՀՀ պատվիրակությունը նշել է, որ համատարած եղանակով փորձաքննությունների նշանակումը նույնպես խնդրահարույց է, և հետևաբար նույնիսկ այդ պարագայում ավելի տրամաբանական կլիներ ընտրանքային եղանակով փորձաքննությունների նշանակումը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել, սակայն որոշվել է, որ հայկական կոնյակով բեռնված 55 բեռնատար մեքենա 2025թ. հունիսի 23-ին բաց կթողնվի Գեզիի մաքսային տերմինալից, ևս 72-ը բաց կթողնվի առաջիկա յոթ օրվա ընթացքում, որին կհաջորդի լրացուցիչ 24 մեքենայի բացթողում:

Հանդիպման ընթացքում ձեռք է բերվել նաև բանավոր պայմանավորվածություն՝ այսուհետ հայկական շշալցված կոնյակի արտահանման գործընթացի կազմակերպումն իրականացնել փոխադարձ ընդունելի և կանխատեսելի պայմաններով:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Վրաստանի ներկայացուցիչները առաջարկել են, որ հետագա խնդիրները քննարկվեն աշխատանքային կարգով երկու պետությունների համապատասխան պետական մարմինների ներկայացուցիչների պարբերաբար կապի միջոցով:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Էդուարդ Հակոբյան

24.06.2025թ.